

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամէն ընդամով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւարանիւր բաժին 2 կոպեկ.
Տէլէֆօն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՆԻ ԱՐԾՐՈՒՆԵՐ

Ծաղկազարդ կիրակի, մարտի 29-ին, Վանքի աւագ եկեղեցում, պատարագից յետոյ,
12 ժամին, կը կատարվի հոգեհանգստեան պաշտօն ի Տէր հանգուցեալ

Գ Ր Ի Գ Ո Ր Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ս Ա Ղ Ա Փ Ի Ր Ե Ա Ն Ի

յիշատակին, որի մասին Վանքի միաբանութիւնը յայտնում է յարգելի հայ հասարակու-
թեան:

1—1

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Անձնաւոր զուգընթաց. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Հայ մատակարարները խնդրելով, Նախկին Աստու-
թանից. Նախկին Արքեպիսկոպոսից. Ներքին լու-
րեր. ԱՐՍՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զօրացի երկրորդ
դաստ. Նախկին Անդրկապից. Նախկին Բօլշակով
մէջ. Նախկին Պարսկաստանից. Արտաքին լուրեր.
ՍԵՐԱՆԻ ԼՈՒՐԵՐ. ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մէլքի աղ-
ջիւր:

ԱՆԾԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր երկիրը հարկաւոր կորած, մե-
ռացված անկեղծութեան ունի, որոնք մատրո-
նիս են կատարեալ անուշադրութեան և
որոնք սիրում են միայն լուս, ծածկվել ան-
յայտութեան մէջ: Բայց այդ լուսութիւնը,
այդ անյայտութիւնը ո՞րպիսի ցաւեր է
թափում իր մէջ, որպիսի անասունի
զրուցութիւն է թափում մարդկանցից: Բա-
ւական է, որ փոքր ի շատէ գրագէտ մի
մարդ պատահաբար գրիչ վերցնել և ապա
ձեռք այդ անձնաւոր տեղերի կեանքից եր-
կու-երեք գիծ. ո՞րքան թոյլ և անարուեստ
լինի նկարագրութիւնը, դուք չէք կարող
չը ստակալ, պատկերացնելով ձեր առաջ,
երևակայութեան օգնութեամբ, ձեզանից
հեռու գտնվող կեանքի ամբողջութիւնը:
Դուք չէք կարող առանց խորին վշտի, ա-
ռանց սարսուռ զգալու, նայել այդ մութ,
մշուշապատ կեցութեան, որ կորած է ան-
մատչելի լեռներում, հաղորդակցութեան
ճանապարհներէ, փոքր ի շատէ խոշոր

կենտրոններից կտրված տեղերում:
Երևակայեցէք մի որ և է անկեղծ մի
ճանդեղորի կամ մի ձվանշիւրի դաւաճում,
ձմեռ ժամանակ, երբ գիւղը գիւղի հետ
չէ կարողանում հաղորդակցութիւն ունե-
նալ, երբ չորս կողմում ամեն ինչ թաղ-
ված է ձիւնի տակ և մարդը կատարելա-
պէս անգործ է, առանց աշխատանքի, ըս-
պառում է միայն այն, ինչ կարողացել է
իր ձեռքով հաւաքել ամառը: Մենք չենք
խօսում քաղաքացիութեան, սաստիկ կարօ-
տութեան մասին. դրանք ծանր հանգա-
մանքներ են, որոնց սովորել է չարքաշ
մարդը: Բայց երևակայեցէք, որ այդպիսի
տեղերում սկսվել է որ և է տարափոխիկ
հիւանդութիւն. երևակայեցէք թէ այդ-
տեղ բոյն է գրել գիծերիտուր, կարմրուր
կամ ծաղիկը: Այդ հիւանդութիւններից
մէկը, դիցուեք, վարակում է գիւղերը, կա-
տաղի է, մեծ քանակութեամբ զոհեր է
տանում: Տեղի է ունենում մանուկների
այնպիսի կոտորած, որի առաջ նսեմանում
է նոյն իսկ Բեթլեհէմի մանուկների կոտո-
րածը: Եւ այնուհետեւ հարցը չէ ձեռք. ի՞նչ
կարող է անել գիւղացին այդպիսի սարսա-
փելի հանգամանքներում: Նրան մնում է
միայն տանել այդ դժբաղդութիւնը, տանել
այնպէս, ինչպէս տանում է իր միւս դժ-
բաղդութիւնները—սովը, կարօտութիւնը
և ուրիշ գիւղական ցաւերը: Նա ոչ միայն
լուս է, ոչ միայն բաւական է համարում
իր ցաւերը սեփական արտասուքների մէջ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵԼԻԲԻ ԱՂԶԻԿԸ

Նա, ի հարկէ, չը գիտէր որ այդ բօլեկին իր
հակառակորդի ակնմանում հնչում էր Ֆէմի-
փաշայի ձայնը. Բօլշակով, որդի, քնացողն:
Սրանից էլ լաւ միջոց... Մի թեթեւ դիտողութիւն
էր պահանջվում. անհաւատ չները բարեկամու-
թիւն էին խնդրում, մի բան, որ կատարելապէս
համապատասխանում էր Մուստաֆա-փաշայի դի-
տաւորութիւններին: Ինչու չը խաբել դիմացի-
նին, որ այնքան անխելք է: Բէկը սկսեց իր
կողմից էլ հաստատել, որ լաւ է բարեկամու-
թիւնը: Նա ինքը կարող էր քարոզանդ անել
մէլքի տունը, բայց չարաւ սիրուն աղջկայ
պատճառով: Նա համաձայն է, բայց խօսք ունի
միայն ժամանակի մասին:

—Միջոց գտնուե՛ր եւ չեմ սպասի, ասաց նա:
Բայց մէլքը դրական խօսք չէր տալիս. նա
աշխատում էր ժամանակը անորոշ թողնել, և
աջողութիւն չուանցաւ: Բէկը ձեռք չէր վերց-
նում իր պահանջից:

—Երբեք երկար խօսել այդ մասին, բէկ,
հարցրեց մէլքը:—Դեռ ամիսներ կան, հեշտ է,
կը տեսնենք...

Այս խօսքերով նա վերջ տուեց խնամախո-
սութեան: Միջին ճանապարհը բացված էր. նո-
րափեսան գնաց, համաձայնելով, որ իրաւ, այդ
հարցին էլ հեշտ կարելի է լուծել: Այնուհետեւ
մէլքը երկար խրատում էր Աննա-խաթունին և
Գայիանէին: Ամէն ինչ այժմ այդ երկուսի
ձեռքումն էր: Գիտէին նրանք թէ ինչպէս են
զաւարճին փաթաթում ցանցերի մէջ, յիշում են
հէքեթի երկնային, որ քնացնում էր ամենի
վիշապին: Այս ամիս մէջ օր ու գիշեր ուրիշ

միտք չը պիտի լինի: Զուգութիւն, դադանա-
պահութիւն...

Նա գնաց, վստահ լինելով, որ աղջիկը կա-
ռայնորդէ մօրը: Գայիանէն գոհ էր և հանդիստ.
նա լաւ գիտէր իր գործը և հեռուհեռ էր փա-
րատէր մօր տարակուսանքները:

Գիւղում արդէն գիտէին, որ Մէլք-Աւանը իր
ձեռքով իր բոլոր աղջկան տուեց Սիւլէյման-բե-
կին: Եւ մէլքը ամենին չուզեց ծածկել, որ
այն, այդպէս է արել ինքը: Նա յայտնեց մարդ-
կանց այդ «ուրախալի» լուրը, «աչքալուսանք»
տուեց և աւելացրեց, որ այսուհետ ամենքը
ուրախ պիտի լինեն: Նրան պատասխանում էին
հեղանկան ժպիտներով. ոչ ոք, ի հարկէ, չէր
համարձակվի ասել թէ դա ուրախալի բան չէ.
բայց հաւանութեան խօսքերի մէջ անգամ որ-
քան դաւանութիւն կար... Մէլքը ուշադրութիւն
չը դարձրեց ծաղրի վրա և պարզ երեսով հեռա-
ցաւ գիւղից: Միթէ ուրիշ երբ կար, հարցնում
էր նա ինքն իրան:

Ո՛չ, միայն այս միջին ճանապարհն էր, որ
ուղիղ էր ու լայն: Նա տանում էր դէպի ձմեռ-
վայ վերջը: Այնտեղ նա վերջանում էր և այ-
նուհետեւ դարձում էր... Ի՞նչ կը լինի, երբ ձմեռը
դիւր կը նայէ թփերի տակից, երբ կը գան ծի-
ծեռնակները և կորսնեն իրանց չին բոյները:
Գարուն... Բէկը անդադարեալ կրկնում էր
այդ անունը, չը հասկանալով, ի հարկէ, որ մէ-
լքը սպասում է դարձան ծաղիկ, ինչպէս երե-
կան սպասում է կարմիր մուրին: Ո՛րք է այժմ
Ասլանը: Նա աջողութիւն չի ունենայ այս ան-
գամ էլ և այն ժամանակ... Միծեռնակների,
մոշահաւերի երգերով լցված կը լինեն ձորերը,
իսկ մէլքը կարտասանէ իր վերջին, սարսափե-
լի խօսքը: Օգնութիւն չեկաւ, թող բացվեն գե-
րեզմանները: Հողի տակ շատերը կան, որոնք
ընկել են անհաւասար կուրի մէջ. թող նրանք
խման, որ անհաւասար կուրը հասցրեց վեր-
ջին, և վերջը կատարեալ եղաւ... Բայց միջին
ծիծեռնակները ժամանակ կայ, և ո՞վ գիտէ...

խեղդելը, այլ և այնքան տղէտ է, ան-
հասկացող, որ նոյն իսկ ամեն միջոցներ
ձեռք է առնում, որպէս զի իր այդ ցա-
ւերով չը գրաւէ զբոսիկների, լուսաւորված-
ների ուշադրութիւնը: Դարաւոր նախա-
պաշարմունքները այն դրութեան են հասց-
րել նրան, որ նա պատրաստ է սպանել իր
համազգիւղացուն, որ կը փորձէ գնալ և
յայտնել իշխանութեան թէ գիւղում
յայտնվել է այս ինչ համաճարակ հիւան-
դութիւնը: Նա չէ ուզում, որ գործադր-
վեն եռանդուն միջոցներ հիւանդութիւնը
սահմանափակելու կամ վերջացնելու հա-
մար:

Եւ այսպէս, այդպիսի հանգամանքների
շնորհիւ, մեր գիւղական աշխարհում աւել-
ի և աւելի հաստատ հիմք են բռնում
սերունդները ոչնչացնող, այլասեռող հի-
ւանդութիւններ: Մանկական հիւանդու-
թիւնները իրանց հունձն են տանում, սի-
ֆիլիք տարածվում է անարգել, աւելի և
աւելի խոր արմատներ է գցում գիւղական
աղբաբնակութեան մէջ: Ուրիշ խօսքերով,
մշտական մահացնող սուրը չըբժն է ժո-
ղովրդի մոռացված խաւերում: Վնասը ալ-
ներեւ է. մեր ապագան սպառնալից է,
վստահների ենթարկված: Իսկ մենք ոչ
միայն անտարբեր ենք դէպի այդ աղէտը,
այլ և չը գիտենք անգամ թէ ինչեր են
կատարվում այնտեղ, հեռու կորած ան-
կեղծներում: Ով մի քիչ զբաղիտութիւն է
սովորում, նա դառնում է ահագին պա-
հանջների տէր և հեռանում է գիւղից:
Մեր ինտելիգենցիան էլ փող աշխատելու
եռանդ է ընկնում: Բայց ո՞վ պիտի օգնէ
ժողովրդին:—Մտածեցէք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՄԱՍԱԿԱՐԱԲԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Այս տարի հացի պակասութիւնը զգացվեց ոչ

աշխարհը անահնկալ բաների ասպարէզ է: Ո՞վ
էր սպասում թէ օտմանցիները կը հասնեն Ղա-
բաղային և ո՞վ էր սպասում թէ այս երկիրը
յանկարծ ապքան մոռացված, անօգնական կը
մնայ: Ո՞վ կը կարծէր թէ աղէտները լրացնելու
համար էր մեռնէր Մէլք-Յուսէփը և մահա-
ւանդ ո՞վ կը կարծէր թէ այժմեան մեծ աղէտի
ժամանակ նրա աղջիկը փոքրիկ խնջար կը տա-
նէ իր մօրը... Երեխան կանի ինչ ասում է.
անհնարին է որ այդպիսի սուրը եռանդով, այդ
ստորիման վառ հաւատով սկսած գործը անաջող
լինի: Երեխաները ոտը են կանգնում. միթէ
դա նշան չէ, որ նրանց արդար հոգիները տես-
նում են զալոց օրերը և դրոս են, որ ծիծեռ-
նակների հետ կը գայ և օգնութիւնը... Ո՛չ, ա-
մենալաւը այս միջին ճանապարհն էր...

Ապագան անյոյս էր, մեկը. բայց նրան ոգե-
ւորում, սիրտ էր տալիս այն ճանապարհը, որ
տանում էր դէպի այդ ապագան: Նա չը նկա-
տեց, որ մի մարդ դուրս եկաւ իր առաջը և
ուշադրութիւն դարձրեց այն ժամանակ, երբ այդ
մարդը տուեց իր անունը: Առանց մի խօսք ա-
նելու, նա խոսքի դուրս եկաւ ճանապարհից և
իր ձին քշեց դէպի ձիւնապատ բլուրները:

Նա գնում էր Մանասին տեսնելու: Երէկ
խմել մարդկանցից մէկը դուրս էր կանչել նրան
մէլքի տանից և յայտնել էր թէ ինչ է ուղում
անել Մանասը: Գիւղակի տէրը բոլորովին հա-
կաւակ էր այդ մարդին, բայց ոչինչ չստեղծ
տեսակցութիւն էր նշանակել այսօր ճանապար-
հին, այն ժամանակ, երբ ինքը կը վերադառնար
Աւետարանից: Մանասը սպասում էր առաւօ-
տից: Եւ մէլքը շտապում էր նրան հասկացնե-
լու, որ այժմ վնասակար է ամեն մի արդուի,
ամեն մի խառնութիւն: Երկրի համար պահանջ-
վում է խաղաղութիւն. թշնամիները պիտի քը-
նեն, ինչ խելք է այժմ, ձմեռվայ մէջ, զարթեց-
նել նրանց: Եւ վերջապէս այն գործը, որ վեր-
ջացաւ այսօր առաւօտ... Մանասի կողմից մի
մեծ իմաստութիւն կը լինի խանդաբել այդ գոր-

միայն Անդրկովկասում, այլ և Ռուսաստանի միւս
կողմերում: Այդ փաստը նորից ասպարէզ հա-
նեց հացի մատակարարութեան խնդր-
ը, որ մի քանի անգամ ընկել է, բայց չէ
լուծվել: Պետերբուրգի Ազատ-Տնտեսական ընկե-
րութեան մէջ տեղի ունեցան մի չարք նիստեր,
որոնք նախկին էին այդ խնդրի քննութեան և
մշակութեան: Զեկուցումներից և մասնակցողնե-
րի բացատրութիւններից պարզվեցին շատ ան-
միտ խառնակաւ հանգամանքներ այդ գործի ներ-
կայ կազմակերպութեան վերաբերութեամբ: Բա-
նից դուրս է գալիս, որ ներկայ հանգամանք-
ներում անկարելի է լինում հաց հասցնել ոչ մի-
այն խուլ և հեռու անկեղծները, այլ և այն կե-
տեղը, որոնք դառնում են երկաթուղային գծե-
րի մօտ. հացը ստացվում է թանկ գնով և շատ
անգամ վատ յատկութեան ունի: Պէտք է մի
չարք միջոցներով կարգի բերել այդ գործը, ա-
րագայնից երկաթուղային ապրանքների տեղից
տեղ ուղարկել, պակասեցնել ապրանքի ճանա-
պարհածախը, հսկել հացի յատկութեան վրա,
բացի ուտելու հացից աչքի առաջ ունենալ սեր-
մանելու պահանջը և դիւրացուն օգնել ոչ մի-
այն ուտելու նիւթ տալով, այլ և սերմացու հա-
ցահատիկներ:

Տնտեսագէտներից և դիւրամտեաններից կազմ-
ված այդ ժողովները այն կարծիքն են յայտ-
նում, որ հացի մատակարարութեան խնդրը
պէտք է փոքր ինչ ընդարձակ մոտքով հաս-
կանալ և չօչալիկել կերպով օգնել գիւղա-
ցուն, անբերրի տարիներից յետոյ վերակազմելու
իր քաղաքային անտեսութիւնը: Ի միջի այլոց
ժողովականների մի մասը առանձին նշանա-
կութիւն տուեց տեղական մամուլի կատարած
դերին կամ աւելի ճիշդն ասել՝ այն դերին, որ
նա կարող էր կատարել քննութեան առնելով
թէ հացի մատակարարութեան գործի վիճակը
և թէ օգնութեան եղանակները նպատակայա-
րար կազմակերպութեան գործը: Ընկերութեան
նիստերին մասնակցում էին զեմստովների և աղ-
նուականների ժողովների ներկայացուցիչներ,
որոնք շատ տխուր գոյններով էին նկարագրում

ժը հէնց սկզբում: Եւ մէլքը շտապեցնում էր
իր ձիւնը, որ ժամ առաջ հասկացնէ Մանասին
թէ որքան կարեւոր է Սիւլէյման-բեկի անվերջով
բուրն:

Բռնաւորի քնի մասին էր մտածում և Բէօսա-
Մուխտարը, երբ խոսքի երկրպագութիւններ
անելով ներս մտաւ, մատուցեց իր շնորհաւո-
րութիւնները և յայտնեց, որ ինքը ուրախ է:
Այս ուրախութիւնը կեղծ չէր: Բէկը բարեհաճու-
թեամբ վերաբերվեց նրան և այդքան էլ բաւա-
կան էր: Մուրաբ աղայի գործակալաւորը հեռա-
ցաւ, աւելի ևս համոզված՝ որ սերիալին հա-
տադրու է: Նրա հաստ չըթուները ճանա-
պարհին մի քանի անգամ արտասանեցին. «Ով
արագ է գործում, նա է վերջնում»: Եւ իրաւ,
կիթ Մէլք-Աւանին հարկաւոր էր անորոշ ժա-
մանակ վստասելը, Սուլէյմանը համար մի ջանք
ժամին էլ բաւական էր... Վտանգաւոր էր նրա
ձեռնարկութիւնը, բայց աջողութիւնը կախված
էր յանդգնութեան չափից: Առ այժմ շատ լաւ
էին գնում հանգամանքները: Նա մի անգամ էլ
համոզվեց այդ բանի մէջ, երբ հասնելով տուն,
տեսաւ որ Նազուլան նոյն գրգռված դրութեան
մէջ է: Եւ քիչ մնաց, որ չը կարողանայ ծածկել
իր ներքին բերկրանքը, երբ աղջիկը յարձակվեց
նրա վրա ու արտասանեց նոյն անփութիւն հարցը.

—Ո՛րք է մարդս:
Ամբողջ գիշերը և առաւօտը նա հարցնում էր,
հաւատաշատ, որ ուղում է տեսնել իր մօրը:
Բայց Մուխտարը ուշադրութիւն չէր դարձնում,
իսկ մէկ-մէկ բերանի ծայրով ասում էր թէ
Նազուլան միմյան չի անի այն, ինչ պահանջվում
է: Այս անգամ էլ նա կրկնեց նոյնը և աղջիկը
էլի սկսեց հաւատաշատ:

—Նա միմյան կանոն, եւ ինքն դուրս կը բե-
րեմ բախտաւորին, ասում էր նա և արտասանեց
թափում:

Մուխտարը անողոր էր: Նա սկզբից շատ լաւ
էր ըմբռնել թէ ինչպէս կարելի է շահագործել
որդական սէրը, որ բորբոքված էր այդ խեղճի

մի քանի հասանգսներ վիճակը և հրաւր է Էրն կարողութեան անյապաղ ձեռնարկելու օգնութեան գործին: Յարուցած խնդիրը պէտք է վերջապէս լուծուի ստանալ, որովհետեւ անբերրութիւնը արդէն դարձել է մշտական երևոյթ և նրա դէմ կռուելու համար անհրաժեշտ է հաստատ կազմակերպութիւն:

ՆԱՄԱԿ ԱՍՏԻՍԱՆԻՑ

Մարտի 16-ին

Արիստակէս արքեպիսկոպոսի կարգադրութեամբ մեր քաղաքի քահանաները ամեն կերպի քարոզ են խօսում եկեղեցիներում: Իսկ անցեալ կիրակի մեծ հաճոյք զգացին շտապ իսկ սրբազանի քարոզը: Իր խորութեամբ և զօրեղութեամբ դա այն հաղուստիւն քարոզներին էր, որ շատ քչերին է աղոյժում խօսել: Սրբազանին լսելու համար մեծ բազմութիւն էր խմբվել: Քարոզիչը ուղեւորված էր երեւում, գոցեց պատճառը հենց այն ուրախ լուրն էր, որ և առկա էր տուել սրբազանի այդ օրվայ խօսքին: Նա աւանտում էր ժողովրդին, թէ՛ ներքին գործերի միջնորդութիւնը թող է տուել Աստուծոյն հայ կանանց ունենալ Բարեգործական ընկերութիւն, մի ընդարձակ, բոլորովին նոր կազմված կանոնադրութեամբ, որով և աստուծոյն հետ մար գործունէութեան մի լայն ասպարէզ է բացվում:

Պէտք է ասել, որ մեր նախկին առաջնորդներից մէկը՝ սիրելի հեշտ միջոցներով անուս վաստակել, մի քանի տարի առաջ՝ Հայունեաց Խնամատար ընկերութեան մի թեթև կանոնադրութիւն էր առաջարկել Մակար կաթողիկոսին, որ և հաստատել էր այն մարդով, որ այդ խնամատար ընկերութիւնը գործէր գլխավորապէս հայոց օրերդրաց դպրոցի հոգաբարձութեան կից, հովանաւորելով և խնամք տանելով որք և չքաւոր աշակերտութիւններին, նրանց չոր և ուսումնական պիտոյքներ մատակարարելով: Ընկերութիւնը այդպիսի մասնաւոր հիմունքների վրա դրված լինելով և հաստատված չը լինելով իշխանութիւնից, սրանից մօտ երկու տարի առաջ դադարեցրված էր նոյն իշխանութեան կողմից: Բայց մի խումբ եռանդուն կանաք, Արիստակէս արքեպիսկոպոսի աշակերտութեամբ, ջանք գործ դրին աւելի կանոնաւորելու և հաստատուն հիմքերի վրա դնելու այդ համակարգի գործը, ուստի սրբազանի, իրաւաբան Ալաշարեանի և Յովակիմ Փարեմուզեանի մասնակցութեամբ կազմվեց մի ընդարձակ կանոնադրութիւն և առաջարկվեց միջնորդութեան հաստատելու: Վերջապէս երկար գործողութիւններից յետոյ հաստատվեց «Աստուծոյն հայունեաց Բարեգործական ընկերութեան» կանոնադրութիւնը: Սրբա-

մէջ: Եւ նա ջանք չէր խնայում, որ աւելի և աւելի բռնկվի այդ սէրը, հանդիպելով որքան կարելի է շատ դժուարութիւններին:

—Ուր է, ցոյց տուր, թող մի անգամ էլ տեսնեմ, թող տուր որ նա համարէ ինձ...

Եւ մտիկ տալով արեգակին, նա աւելի խնայողութեամբ առաջ տարաւ իր պահանջը:

—Ի՞նչ օր կայ, ինչպէս սպասեմ: Ա՛հ, շուտ միջնէր, շուտ... Այն ժամանակ ցոյց կը տաս, հա...

Մոխտարի դիւական ժպիտները նրան կատարելապէս ուժածապառ էին արել: Խեղճը չէր էլ ենթադրում, որ այդ մարդը խաբար է իրան, չը գիտէր որ իր մայրը Աւետարանոց չէ բերված: Նա հաւատում էր, որ այստեղ կայ մի բաժանող պատ, կայ մի դուռ և եթէ նա բացվի, ինքը անարգել կընկնի իր մօր գիւղը: Այդ պատը, այդ դուռն էր նա օրնում և չէր տեսնում... Իսկ Մոխտարը ծուռութեամբ էր նրա սիրտը իր ժպիտներով:

—Ի՞նչ էլի նախկին դէն ես, գրողը տանէ քեզ, աղաղակեց Նազարը:—Գարձեալ քար, դարձեալ գոգնել... Բայց ես քեզ հարկաւոր պիտի լինեմ, հասկանում ես... Առանց դրան իմ մայրը չի ազատվի... Չեմ հաւատում, որ ես մինակ կանեմ: Սպասիր, ես իսկոյն կը գամ և կը հաւատացնեմ քեզ...

Եւ դուրս վազելով, գնաց դէպի աղբանոցը:

—Փէրին... Նա էր, որ կորցրեց Մոխտարի հաւատը: Ինչու այնպէս խօսեց, ինչու ասաց թէ ինքը չի թողնի... Հիմա չեն ցոյց տալիս, բայց նա այստեղ է, իմ մայրը: Թող այժմ Փէրին գայ և հաւատացնէ Մոխտարին, որ Նազարն, այո՛, կարող է մեռակ կատարել... Ի՛նչ դժուար բան է բախտաւորին դուրս հանելը: Բայց չեն հաւատում...

Այսպէս խօսելով ինքն իր հետ, նա մտաւ տնակը: Ամեն ինչ քարացել էր այդտեղ, ոչ ոք չէր շարժվում, ոչ ոք չուէր չէր քաշում: Մինչև անգամ Մարթան... Նա կպել էր տատին և նա-

տանց աղոյթութիւն ցանկանալով ընկերութեանը, սպասում ենք, որ իրանք կանաք աշխատեն իրանց գործունէութեամբ հետաքրքրութիւն առաջ բերել իրանց նմանների մէջ և արդարացինը հաստատութեան արդար պահանջները:

Այդ օրը մի երկրորդ հաճոյք էլ զգացինք, ներկայ լինելով այն «գրականական-երաժշտական առաւօտ»-ին, որ կազմել էր արական գիմնադրային վարչութիւնը «Առկա» անունով: Թէ՛ երգերը, թէ՛ ընկերացանութեան նիւթերը և թէ՛ երաժշտութիւնը, շատ չնչին բացառութեամբ, ընտրված էին Նովկային վերաբերված երկերից, որոնք պատկերացնում էին նրա հրաշալի ընտրութիւնը իր գեղեցկութիւններով, վայրենի տեսարաններով և բազմազան ու բազմաառարաղ ազդեցութիւններով: Այստեղ էր և լեռների հսկան՝ առիւծ Նամիրը և իր իգիթ համարները, և անդադր, անհոգ վրացին, վայրենի օսը... չը մոռացան և հայերին: Նովկայից դատաւան մի ուս աշակերտ, ի միջի այլոց, գեղեցիկ գոցներով նկարագրելով Մարտը, Արարտեան դաշտը, Հայաստանի անմահ ամառը, և նրա հարուստ ընտրութիւնը, համառօտ ակնարկ ձգեց հայաժողովը: Նա զգովականների վրա, այսպէս վերջացնելով իր նկարագիրը՝ «Քաղաքական ներկայ հանդամանքներին նայելով, այդ բազմաառարաղ ժողովրդի հայաժողովներին շուտով վերջ կը լինի Հայաստանում»: Առաւօտ»-ը շատ կենդանի անցաւ: Հաստատութեան ուղարկութիւնը գրաւեցին և ոգևորված ծափահարութիւններ արժանացան երկրորդ դաստան երկու հայ աշակերտներ՝ Լև խանեանց և Բայեանց: Առաջինը մեծ ճաշակով երգում էր, իսկ երկրորդը՝ մեծ հմտութեամբ՝ զայնաւորելով վրա նուագեց մի քանի դժուար կերպերով: Թէ՛ այդ խօսքերը, թէ՛ տեղական երկու լրագրողների գովեստները և թէ՛ հանդիսականների բուռն համակրանքը թող մեծամտութիւն չը դարձնէին չորաբալի պատանիների և դրանց նմանների մէջ, այլ ընդհակառակը՝ հենց այդ առաջին օրերից սկսեւ սիրել իրանց ծափահարող հասարակութեանը, սկսեւ ճանաչել հասարակութեան պէտքերը և հենց գիմնադրիչի պատերի մէջ պաշար ձեռք բերեւ այդ հասարակութեան համար պիտանի և գործունէայ անդամներ լինելու: ***

ՆԱՄԱԿ ԱՐԷՇԻ ԳԱՆԱՌԻՑ

Մեծ-Սեօգուլիւ, մարտի 18-ին

Աւագակային բարեբարութիւններին վերջ դնել կարելի չեղաւ նոյն իսկ այժմ, երբ մեր նոր նահանգապետը ձեռք առաւ ամենախիտ միջոցները: Օր չէ լինում, որ մեր գաւառում տեղի չունենան թաղան, կողպուտ և նոյն իսկ սպանութիւններ: Ամեն տարի երեւան են դալիս

յում էր նրան: Նաղուն յետ քաշեց երեխային և յանկարծ մի զարհուրեցի ձիւ արձակեց: Նրա առաջ ընկած էր Փէրին խեղճը մարդու այլ լանդակ դէմքով: Կաշերը չուած, սպիտակուցի վրա շուռ եկած, բերանը կիսաբաց, արիւնոտ լեզուն կախ ընկած...

—Փէրին, նորից աղաղակեց աղջկը և սկսեց շարժել դիակը, կարծես ուղում էր զարթոցնել նրան:

Նմիկնում կուչ եկած պառաւը շարժվեց, հեկեկաց և ասաց, որ ինքը առաւօտեանից կանչում է Փէրինը, բայց նա ձայն չէ հանում:

—Նա սպանված է, նրան խեղճել են, ասաց Նաղուն և լաց եղաւ:

Մարթան կարծես նոր հասկացաւ, որ դա Նաղուն է և շանթահարի պէս ընկաւ նրա գիւղը: Բայց Նաղուն միայն խեղճվածին էր տեսնում:

—Ո՛վ արաւ, ինչու, կանչում էր նա:

Ոչ ոք պատասխան չը տուեց: Մի կողմում պառաւը հանդարտ հեկեկում էր, իսկ միւս կողմին անկողինը, որի մէջ դրված էին հիւանդները, չը շարժվեց, նա ամբողջովին մահվան անշարժութիւն էր... Այդ լուրիւնը, այդ դողացող երեխան և մահաւանդ այդ լեռուն, կախ ընկած, արիւնոտ լեզուն, կատաղութիւն էին թափում աղկկայ սիրտը:

—Ախ, Փէրին, Փէրին, ասաց նա մի զարհուրելի ձայնով, բայց բարեբար արտասուքները ջրի պէս ծլուկեցին նրա աչքերից:

Վշտը մոռացրեց օրը, սպաւող ուրախութիւնը, ամեն ինչ: Իսկ երեխան կարծես ուղում է ծակել այն կողմը, որին կպել էր: Նա էլ լաց եղաւ, նա ուղում էր իր տատին...

—Տաթիկ, վեր կաց, քայցած եմ...

Նաղուն չաց տուեց և նա սկսեց կլանել ագանձութեամբ, խցացնում էր պատանները իր արտասուքներով: Նա ուղում էր և նայելով Նաղունին, հարցնում էր.

—Տաթիկը շուտ վեր կը կենայ... Ես ամբողջ

Սրբիւրից փախած նորանոր աւագակներ, որոնք խմբեր են կազմում և իրանց շուրջը հաւաքելով իրանց նման շատ բաղդանդիրների, ինչ անգլթութիւններ ու անամթութիւններ ասես, գործում են բացարձակապէս: Անցեալ տարի յայտնի աւագակապետ Նաղիւրէգից և նրա մարդկանցից հաղի հաղ էինք աչքներս բաց արել: Գրանք Առաջի կողմից յայտնվում էին երբեմն-երբեմն մեր կողմերում, օր ցերեկով մարդիկ բռնում և 100-ական բուրլի ստանալով արձակում էին: Այժմ էլ յայտնվել է մեր գաւառում մի ուրիշ աւագակային խումբ, որի Փէրինը լա օղլու հետ ընկերացել է ու սկսել թաղան, կողպուտ և սպանութիւններ: Երկու ամսվայ ընթացքում սրանք սպանել են. Թարթաշ թուրք գիւղից երկու մարդ, Գամաղաբից մէկ մարդ, և Նաչմաղից երեք մարդ, և բացի դրանից՝ Նաչմաղի Սահ-Եղբաշուն էլ մահացու կերպով վերադարձել են: Խօշկաչեն գիւղացի հարուստ Բէհրու Սահակեանին, Աղաղից գաւառ ժամանակ, ուղում էին սպանել, բայց նա մի կերպ փախելով ապաստեց: Գիւղացիները, չը կարողանալով դիմանալ աւագակների հացարած նեղութիւններին, միմաւորով դնում են Արշէլի գաւառապետի մօտ և գանգաւորում են: Գաւառապետը գաւառի III մասի պրիստա Տէր-Աստուածատրեանին հրամայում է աւագակների ետեղ ընկնել: Պրիստաը աւագակներին պատահում է Նաչմաղի «Ճաղ» կոչված անտառում ձիւղ այն ժամանակ, երբ նրանք կողպուտում էին մի թուրքին: Չը նայելով պրիստայի գործ դրած միջոցներին, աւագակները անտառում անհետանում են: Եւ մինչև Նաչմաղից մարդիկ հաւաքել և բերել՝ աւագակներն այնտեղից փախչում են դէպի Աղաշ:

Այդ անցքից երկու օր յետոյ Աղաշում կողպուտում են մի թուրք վաճառականի պրիստաը իմանալով աւագակների տեղը, հետամուտ է լինում բռնելու: չը նայելով, որ բոլոր ճանապարհներն ու անցքերը կարգում են, աւագակները փախչում են և երկաթուղով ճանապարհում Բաթում: Պրիստաը, լուր ստանալով այդ մասին, մի օր յետոյ էլ ինքն է ճանապարհվում Բաթում և աւագակներին բռնում է այն ժամին, երբ նրանք պատրաստվում էին ծովն անցնել: Կողպուցի բերելով Աղաշ, աւագակներին բանտարկում են: Բայց աւագակները փախչում են բանտից և ահա ինչ խորամանկ միջոցով: Նրանք գիշերը սկսում են աղաղակ բարձրացնել

օրը հաց էի ուղում, բայց նա չէր լսում: Ինչու չէր լսում...

Խեղճը ոչինչ չէր հասկանում Նաղունի արտասուքներից, նա մեծացել էր լացի մէջ և այժմ, հենց որ կշտացաւ, գործի գցեց իր փոքրիկ լեզուն: Հայց ու փորձ էր անում տատի մասին, նեղանում, լաց էր լինում, երբ Նաղուն պատասխան չէր տալիս: Ի՛նչպէս էր նայում դիակին, ուղում էր մտնել, բայց մի կերպ երկու էր զգում, յետ էր քաշվում և սարսափով լի աչքերը դարձնում էր Նաղունի վրա, կարծես օգնութիւն էր խնդրում:

Այդ լացը ու փորձը ընդհատեց մի ձայն, որ յանկարծ լուրից շէջեցին.—ժամանակ է...

Նաղուն ցնցվեց: Մոխտարն էր... Բայց նա չը վեր կացաւ, չը վազեց դէպի այն կողմը: Արտասուքներից խեղճվող ձայնով, իբրեւ մի մարդ, որ ուղում է բաժանել վիշտը իր նման, թէ և օտար մարդու հետ, նա ասաց.

—Փէրին խեղճել եմ... Ի՛նչ լաւ կնիկ էր...

Ա՛հ, տես ինչ են արել:

Բայց Մոխտարը չը նայեց, այլ սառն եղանակով ասաց.

—Աւելի լաւ, քեզ չի խանգարի...

Յանգրիւթիւնը կուրացրել էր մեծ գերեզմանի վրա գործակաւարտին, և նա չը հասկացաւ թէ ինչ արաւ իր այդ խօսքերով: Այնքան նա վստահ էր այդ աղկկայ վրա, որ համոզված էր թէ նրան էլ կուրախացնէ ամեն մի հանգամանք, որ նպատակում էր մէկը իր աղկկայ առեւանդանով: Առաւ մի առանձին բան չը համարեց այն, որ Նաղուն սաստիկ հարուածից չը կրկնել պէս թափ տուեց իր ուսերը, տեղից վեր թռաւ, մի կողմ գցեց Մարթային և, ուշադրութիւն չը դարձնելով նրա լացի վրա, վազեց դէպի չէմքը: Նրա աչքերը լայն բացված էին, կարծես տրաքվում էին զարմանքից և զարհուրանքից:

—Ի՛նչ ասացիր, աղաղակեց նա:

—Առաւաւ քեզ չի խանգարի... Խեղճը օգ-

և միմեանց հայտնել իբրեւ թէ կուրաւ են: Բանտապետը, լսելով նրանց աղաղակը, ներս է մտնում նրանց սենեակը խաղաղացնելու: Աւագակները նրա ետեղից դուռը կողպում են և սկսում անքան խեղճել բանտապետին, որ վերջինս ուշաթափ ընկնում է: Աւագակները նրան թողնելով իրանց անկողին մէջ, էլի սկսում են աղաղակել և բղաւել, այս անգամ ներս է մտնում օրապահ վերակացուն: Սրան էլ խեղճելով թոկ են կապում սենեակի պատուհանից և վայր իջնելով փախչում են: Գաւառապետը տեղեկանալով այս բոլորի մասին, մարդիկ է նշանակում և Աղաղից բոլոր ճանապարհներն ու անցքերը կտրում: Բայց իբրեւ, որովհետեւ աւագակներն արդէն Աղաղից գաւառ եկած են լինում:

Սրանից մի շաբաթ առաջ, նոյն աւագակները, մի մեծ խումբ կազմած, երևում են Մեծ-Սեօգուլիւ գիւղի մօտերում, որտեղ էլի կողպուտում են մի քանի գիւղացիներ: Մեծ և փոքր Սեօգուլիւ և Ճաղուղու գիւղերից տանում են մօտ 250 բուրլի փող, գօտի և ժամացոյց: Իսկ երկու օր յետոյ՝ էլի նոյն աւագակները յայտնվում են Գամաղաբի թուրք գիւղի մօտերում և օր ցերեկով սպանում են իրանց մի ընկերոջը, որ նոյնպէս փախած է եղել Սրբիւրից: Ինչպէս ասում են, սպանված աւագակը ընկերների համար կասկածելի մարդ է եղել: Առ այժմ աւագակները անհետացած են:

Մ. Մէլլե-Ջահեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Մեղ հաղորդում են Էլմիմանից, որ սինօզի անդամութեան համար առաջարկված են Յուսի արքեպիսկոպոս, Մակար եպիսկոպոս և Բեռաբաբայի թեմի կառավարիչ Գուրի վարդապետ:

Հանգուցեալ բժիշկ Վախրամով կտակով յատկացրել էր 3000 բուրլի թիֆլիս քաղաքի դպրոցներին հայ աշակերտների օգտին: Կտակատարները դժուարանում էին վճել այն հարցը, թէ ում պէտք է աչքի առաջ ունենալ օգնութեան ժամանակ: Այժմ, ինչպէս լսում ենք, հարցը այնպէս է պարզվում, որ այդ գումարը պէտք է յատկացվի քաղաքային դպրոցներին հայ աշակերտներին օգտին: 3000 բուրլուց տարեկան կարող է ստացվել 40%-ով 120 բուրլի, որ և պէտք է ծախսվի իւրաքանչիւր տարի:

Թիֆլիսի քաղաքային ուղարկայի մէջ ներկայումս մշակվում է ծրագիր՝ բանալու Թիֆլիսում քաղաքային միջնադպրոց, որտեղ կը մտնային ամեն տեսակ բարեփութութիւններ թէ մի պահպանելու և թէ ծախելու գործի վերաբերութեամբ:

Ինչ է քեզ...

—Ի՞նչ էիր, հա...

Այս հարցը դուրս թռաւ անդիտակցաբար, Նաղուն բնաղմամբ ճանաչեց յանցաւորին: Բայց այդ յանցաւորից նա բացասական պատասխան էր սպասում, Մոխտարը այս երեկոյ տուր և անարատ պիտի լինի: Օրը վերջանում էր, և միջին Փէրին սպանողի հետ պիտի մնա Նաղուն... Մոխտարը երեք չէր կարող մտածել թէ այս խեղճնոր, կիսամերկ աղկկան մատչելի են այդ տեսակ հասկացողութիւններ... Նա, ընդհակառակը, ուղեց աւելի ևս սիրտ տալ նրան և իր զուրկի ժպիտով հասկացրեց որ այժմ ձիւղ է...

—Ի՛նչու արիւր...

Իսկոյն լուրից սարսափելի պատասխանը:

—Որ դու տեսնես քո մօրը: Ժամանակ է...

—Ի՞մ մօրը... Սուտ ես ասում... Ի՞մ մօր աղաղակեան համար բաւական էր, որ լաց լինէին բախտաւորները: Իսկ Փէրին... Խեղճ էր, շատ խեղճ... Տեսնում ես այս տուր... տեսնում ես այս անկողինը... Իսկ այս երեխան...

—Դրան էլ տար հետը: Մէլլեի աղկկը որբերին շատ է սիրում և իսկոյն դուրս կը գայ, երբ դու իմաց կը տաս թէ քեզ հետ լաց լինող երեխայ էլ կայ...

Նաղուն ձայն և վազելով ընկաւ պառաւի վրա, իր վայրենի ոռնոցները խեղճեց նրա կրծքի վրա...

Մոխտարը բռնեց նրա ձեռքից, վեր կացրեց և, տանելով դէպի դուրս, ասաց.

—Ինչի՞նք ես ժամանակ չէ... Նայիր, օրը միջնում է...

Եւ Նաղուն գլխի շարժմամբ հաստատեց, որ պղպտէ է, ապա երկար նայեց իրան տանողին ու յանկարծ անսահման դուռանքով արտասանեց.

—Լաւ... Բայց գրողը կը տանէ քեզ հենց այս րիշեր...

(Կը շարունակվի)

Մարտի 25-ին տեղի ունեցաւ թիֆլիսի առաջին գիմնազիայի տարեկան ակումբի Վերնիկոսի Մարիով կարգաց 1896—1897 ուսումնական տարվայ հաշիւը, որից երևաց, որ գիմնազիայում սովորողների թիւն է 792. դրանից ուսուցիչները 42%, հայ 26,7%, վրացի 17%, թուրք 4%, հրէայ 3%, և ուրիշ ազգութիւններից 70%: Վիմ-նադիան իր յատուկ միջոցներով գնել է Մանուկ-իսում մի ամբարանից 10 հազար թուրքով: Վիմ-նադիայի շինութիւնը շատ փոքր է, այդ պատ-ճառով վարդութիւնը խնդրել է կառավարութիւ-նից 63 հազար թուրքով: շինութիւնը մեծացնելու համար: Բացի դրանից թոյլտուութիւն է ստաց-վել առանձին շինութիւն կառուցանել գիմնա-զիայի դրազարանի համար, որ պարունակում է 20 հազար հատոր գրքեր:

ԵՐԵՎԱՆԻՅ մեզ գրում են. «Թեմական դպրո-ցը ներկայումս, չորսնիւ տեսուչ Բարամեանի, վերին աստիճանի անդամները վիճակի մէջ է: Ահա թէ ինչ փոփոխութիւններ և կրճատումներ են արված առարկաների մէջ: Վեցերորդ դասա-րանում կրճատված են ֆիզիկա, մանկավարժու-թիւն և ֆրանսերէնը, իսկ հոգեբանութիւնը, որ անցնալ տարի աւանդում էր ֆիզիոլոգիական ուղղութեամբ, այժմ ամբողջում է աստուածա-բանական ուղղութեամբ: Հինգերորդ դասարա-նում կրճատված է տիեզերագրութիւնը: Ստորին դասարաններում կրճատված են մի քանի առար-կաներ, ի միջի այլոց և բուսաբանութիւնը: Վեր-ճատված առարկաների տեղ անցնում են «Վարդ աստուածաբանութեան» վերնագրով առարկան»:

ԿԱՍՍԻՅ մեզ գրում են. «Վեց ամսից աւելի է, որ Կարսի հայ-կաթոլիկ համայնքը խնդրամատոյց էր եղել Արդուինի հոգևոր կառավարութեան՝ ուղարկել մի երկուստարը ուսնալ և գործունեայ քահանայ: Արդուինի եպիսկոպոսական աթոռը մեր ժողովրդի հաճութեամբ ընտրեց Ե. Կարա-պետ Վրդուլիկեանին, որը Կարս եկաւ մար-տի 18-ին: Այժմ, ունենալով երկուստարը և գոր-ծունեայ քահանայ, մենք յոյս ունենք, որ շու-տով տեղի կունենան արմատական փոփոխու-թիւններ մեր եկեղեցական և դպրոցական գոր-ծերում, որոնք չորսնիւ անհոգութեան, երեսի վրա ընկած են և զոհ են դարձել աղայականու-թեան քանահաճութիւններին»:

ԵՐԵՎԱՆԻՅ մեզ գրում են. «Մարտի 21-ին տեղի ունեցաւ Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը: Վերաստուգող յանձնաժողո-վի անդամներից մէկի հեռանալու պատճառով ընտրվեց Լևոն Բարայկան»:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՅ մեզ գրում են. «Միշտ քահանայ Սերանանցի և երէցփոխ Ներսէս Տէր-Յարութիւնեանցի նախաձեռնութեամբ, բա-րեկենդանի վերջին օրը, այստեղի ապշեցնեան քննում ծառայող հայ վիճակներին ճաշ տրվեց: Ներկայ էին մօտ 130 հայ վիճակներ, ամենքը Երևանի նահանգից: Ճաշը տեղի մինչև երեկոյ: Խմելու Թագաւոր Կայսրի և Կայսրուհու կինաց-ները, նոյնպէս և Վեհափառ Կաթողիկոսի կե-նացը: Չինւորների ուղարկութեան և չորհակա-լութիւններին վերջ չը կար: Ուշագրութեան ար-ժանի է այն, որ մեր առևտրականները մեծ ու-րախութեամբ աջակցել էին այդ ճաշին, մասվա-ճանները ուղարկել էին միս, գինեվաճառները՝ գինի և ալկոհոլով ամեն մէկը առատապէս տը-ւել էր ճաշի հարկաւոր պիտոյքը, իսկ խոհարար-ները և մի քանի ուրիշ անձինք ձրիաբար յանձն էին առել ճաշ պատրաստելու աշխատանքը: Ինչպէս լսեցինք, մի քանի անձանց մէջ միտք է յղացել վիճակներին աջակցել մի ճաշ տալ նաև Չատուկ երեկոյեան»:

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁՈՒՑԻ ԵՐԿՐՈՐԻ ԴԱՏԸ

